ԴԱՏԱՎՈՐԱՑ ԳԻՐՔ

Ութերորդ հաղորդում

## Գեդեոնի՝ որպես Աստծու քաջարի ռազմիկի խորքային նշանակությունը

Գրվածքների ընթերցում. Դտվ 6–9

**I. Գեդեոնը բարձրացվեց Աստծու կողմից որպես Նրա քաջարի ռազմիկը և Աստծու կողմից ուղարկվեց Իսրայելին փրկելու (Դտվ 6:12-14, հմմտ Հվի 8:29) մադիանացիների կեղեքումից (Դտվ 6:1–8:32). մենք պետք է տեսնենք Գեդեոնի հաջողության խորքային նշանակությունը.**

Ա. Գեդեոնը ուշադիր լսում էր Աստծու խոսքը, ինչն այն ժամանակ հազվադեպ էր Իսրայելի զավակների միջավայրում.

1. Տերը միշտ ցանկանում է բացել մեր ականջներն Իր ձայնի համար, որպեսզի ամեն բան տեսնենք ըստ Իր տնտեսության՝ Հյտ 1:10, 12, Հոբ 33:14-16, Եսյ 50:4-5, Եզկ 21:6:
2. Երբ Հոգին խոսում է եկեղեցիներին (Հյտ 2:7ա), մեզ բոլորիս անհրաժեշտ է բացված, թլփատված (Երմ 6:10, Գործ 7:51), մաքրված (Եզկ 29:20, Ղևտ 8:23-24, 14:14) և օծված ականջ (խխ. 17, 28)՝ Հոգու խոսելը լսելու համար:

Բ. Գեդեոնը հնազանդվեց Աստծու խոսքին և գործեց դրա համաձայն՝ հմմտ Եբր 11:32-33ա.

1. Նոր Կտակարանում տեսնում ենք Քրիստոսի՝ հնազանդության և ենթարկվելու կյանքը, և եթե քայլենք հոգու համաձայն, ինքնաբերաբար կկատարենք օրենքի արդար պահանջը՝ Փլպ 2:5-11, Հռմ 8:4:
2. Եթե օրենքին մոտենալիս մեր մոտեցումը միայն տառերում եղող պատվիրանների համար հոգալն է, մենք օրենքը կստանանք սպանող տառի տեսանկյունով, սակայն եթե օրենքի ամեն մի մասն ընդունենք որպես Աստծու կողմից, ում սիրում ենք, փչված խոսք, օրենքը կստանանք կենդանարար Հոգու տեսանկյունով. այդժամ օրենքը կգործառի՝ հենց Աստծուն՝ որպես կյանքի, բաշխելով մեր՝ Իրեն սիրողներիս և փնտրողներիս մեջ՝ Սղմ 119:25, 116, 130, Բ Կրթ 3:6, Բ Տմթ 3:16-17:
3. Կենսական լինել նշանակում է լինել կենդանի և գործուն այն բանի շնորհիվ, որ ներքուստ և արտաքուստ լցվում ենք Հոգով և Տիրոջ մեծացման ու վերարտադրության համար քարոզում ավետարանն ու ուսուցանում ճշմարտությունները ցանկացած ժամի և ցանկացած վայրում Խոսքի մեջ սուզվելու արդյունքում՝ Դնլ 11:32բ, Գործ 13:52, 4:8, 31, 13:9, 2:38, 5:32բ, Բ Տմթ 4:1-2:

Գ. Գեդեոնը քանդեց Բահաղի (քանանացիների գլխավոր աստծու) զոհասեղանը և կտրեց Աստարովթը (գլխավոր աստվածուհուն). սա դիպավ Աստծու սրտին, որովհետև Աստված ատում էր կուռքերին, որոնց Նա համարում էր տղամարդիկ, որոնց հետ Իր կին Իսրայելը պոռնկություն

էր գործում. խորքային առումով կուռքը մեր ներսում եղող ցանկացած բան է, ինչը մենք ավելի շատ ենք սիրում, քան Տիրոջը, և ինչը մեր կյանքում փոխարինում է Տիրոջը՝ Դտվ 6:25-28, Եզկ 14:1-3:

Դ. Քանդելով Բահաղի զոհասեղանն ու կտրելով Աստարովթը, որոնք պատկանում էին իր հորը, Գեդեոնը զոհաբերեց հոր հետ իր հարաբերություններն ու հասարակության մեջ իր բարօրությունը, որպեսզի հետևի Եհովային. այս բանն անելու համար Գեդեոնից պահանջվեց, որ նա զոհաբերի իր սեփական շահերը, և իր զոհաբերությունն իր հաջողության վճռորոշ գործոններից մեկը եղավ՝ Դտվ 6:28-32:

Ե. Այս չորս գործոնների շնորհիվ Գեդեոնը պարգև ստացավ. տնտեսական Հոգին իջավ նրա վրա (խ. 34). ուստի նա զորավոր դարձավ և ընդամենը երեք հարյուր մարդկանցով պարտության մատնեց երկու իշխանների ու երկու թագավորների, որոնց մարդիկ «մորեխի պես բազմությամբ» էին և «նրանց ուղտերին թիվ չկար» (խ. 5, 7:25, 8:10-12). Գեդեոնը ներկայացնում է մի մարդու, ով ապրում է Աստծու հետ միության մեջ, Աստվածամարդու, ով կատարում է Աստծու խոսքն ու իրականացնում Աստծու տնտեսությունը:

**II. Հաղթողներին ընտրելը տեսնում ենք Աստծու՝ Գեդեոնին և այն երեք հարյուր մարդուն ընտրելու մեջ, որոնք պետք է պատերազմեին նրա հետ միասին՝ մադիանացիներին հաղթելու համար՝ 6:1-6, 11-35, 7:1-8, 19-25, 8:1-4.**

Ա. Գեդեոնի մասին պատումը մեզ ցույց է տալիս, թե ինչպես լինել հաղթող.

1. Մենք պետք է ճանաչենք մեր «ես»-ը՝ գիտակցելով, որ մենք ամենափոքրն ենք՝ 6:15, Եփս 3:8, Մտթ 20:27-28, Գղտ 6:3:
2. Մենք պետք է տեսնենք Քրիստոսի՝ որպես Աստծու հավիտենական տնտեսության կենտրոնականության ու տիեզերականության երկնային տեսությունը՝ Դտվ 6:12, Գրծ 26:16-22, Կղս 1:17բ, 18բ, Ա Տմթ 1:3-4, Փլպ 3:8, 10:
3. Մենք պետք է մեզ Աստծուն մատուցենք որպես կենդանի զոհերի՝ ըստ Նրա բարի, հաճոյալի և կատարյալ կամքի, որպեսզի ունենանք Քրիստոսի Մարմնի իրականությունն ու ապրելակերպը (Հռմ 12:1-5, հմմտ Դտվ 6:21-24). մենք պետք է լինենք մարդիկ, որոնք լսում են Տիրոջ՝ Հայտնության 2 և 3-րդ գլուխներում հաղթողներին ուղղված կանչն ու պատասխանում դրան՝ 2:7, 11, 17, 26-28, 3:5, 12, 20-21, Օրհներգ 645:
4. Մենք պետք է մեր սրտում, մեր կյանքում և մեր աշխատանքում եղող կուռքերը քանդենք հանուն Տիրոջ վկայության՝ գիտակցելով, որ մի կողմից՝ Աստված մեզ առաջնորդում է Քրիստոսի՝ որպես կյանքի, լույսի և զորության վայելքի մեջ, իսկ մյուս կողմից՝ Աստված հավատարիմ է՝ թույլ տալով, որ ունենանք ֆինանսական դժվարություններ, զգացմունքային տառապանքներ, ֆիզիկական տառապանքներ և բնական բարության կորուստ, որպեսզի ընդունենք Քրիստոսին՝ որպես մեր բավարարության, լցվենք Քրիստոսով և Նրան թույլ

տանք զբաղեցնել առաջին տեղը բոլոր բաներում՝ Դտվ 6:25-28, Հվի 10:10, 8:12, Բ Տմթ 2:1, Կղս 1:17բ, 18բ, Ա Հվի 5:21, Հոբ 22:24-26, Մտթ 10:35-39, Բ Կրթ 12:7-9, Հոբ 1:1, 22, 2:9-10, 3:1, 11, Բ Կրթ 4:5, Ա Կրթ 2:2:

Բ. Հաղթողների ընտրվելը երևում է երեք հարյուրին ընտրելու մեջ. Գեդեոնին ասելով, որ նա չափազանց շատ մարդիկ ունի՝ Աստված ցույց էր տալիս, որ Ինքը պատերազմելու է Իսրայելի համար. առաջին ընտրության արդյունքում քսաներկու հազարը հեռացան.

1. Հեռացողներն ուզում էին փառավորել իրենց՝ Դտվ 7:1-2, Հվի 5:41, 44:
2. Հեռացողները երկչոտ էին ու վախենում էին՝ Դտվ 7:3, Մտթ 25:25, հմմտ Երկ Օր 20:5-8:

Գ. Երկրորդ ընտրությունը վճռվեց այն բանով, թե մարդիկ ինչպես էին խմում. նրանք, որ անմիջապես բերանով էին խմում, հեռացվեցին Աստծու կողմից. նրանք, ովքեր խմում էին՝ ջուրը ձեռքով բերանին մոտեցնելով, ընտրվեցին Աստծու կողմից, որովհետև նրանք իրենց ուրացող մարդիկ էին. այսկերպ խմելով՝ նրանք կարող էին ջանասիրաբար հետևել իրավիճակին՝ կանխելով թշնամու ցանկացած հարձակում՝ Դտվ 7:4-6.

1. Նրանք, ովքեր իրենց քմահաճույքներին հագուրդ տալու հնարավորություն ունեն, բայց դա չեն անում, իրենց ուրացող մարդիկ են, որ ենթարկվել են խաչի աշխատանքին՝ իրենց անձնական հանգիստն ու հարմարավետությունը զոհաբերելով հանուն Տիրոջ մտահղացման Նրա պատերազմի օրը՝ խ. 7, Սղմ 110:3:
2. Հաղթողները բացարձակ են Աստծու փառքի հանդեպ և ոչնչից չեն վախենում՝ բացի Տիրոջը վիրավորելուց ու Նրա ներկայությունը կորցնելուց (Ելց 33:14-16). նրանք թույլ են տալիս, որ խաչը վերջ դնի իրենց «ես»-ին (Ա Հվի 3:8, Եբր 2:14, Հռմ 6:23, Գղտ 2:20):

Դ. Աստված Գեդեոնին երեք հարյուր մարդ տվեց և նրանց մեկ ամբողջություն դարձրեց, ինչը խորհրդապատկերված է «կլոր գարեհացով», որ գլորվում էր մադիանացիների բանակով, որպեսզի նրանց պարտության մատներ և Աստծուն հաղթանակ բերեր՝ Դտվ 7:9-25.

1. Գեդեոնն ու իր մարդիկ միասին շարժվում և գործում էին միաբանորեն որպես մեկ մարդ, ինչը խորհրդապատկերում է Հոգու մեջ եղող միասնությունն ու ապրելակերպը Մարմնի մեջ. նրանք միախառնված էին հարության մեջ, որի խորհրդապատկերը գարին է՝ առաջինը հասնող հացահատիկը (6:16, Բ Թգ 21:9, Ղտց 23:10, Ա Կրթ 15:20), որպեսզի լինեն մեկ հաց, որը խորհրդապատկերում է եկեղեցին (10:17):
2. Պողոսի այն միտքը, որ եկեղեցին մեկ հաց է, վերցված էր Հին Կտակարանից, հացի ընծայից (Ղտց 2:4-5). մենք ցորենի բազում հատիկներն ենք (Հվի 12:24), որպեսզի աղացվենք՝ դառնալով շարմաղ

այլուր, որ միաձուլվում է յուղի հետ՝ եկեղեցու բլիթը՝ հացը, պատրաստելու համար (Ա Կրթ 12:24-25):

3. Բոլոր համագործակիցներն ու երեցները պետք է հովվեն իրար և սիրեն իրար, որպեսզի Մարմնի կյանքի նմուշօրինակ լինեն՝ այն մարդկանց նմուշօրինակը, ովքեր սովորում են չափավորվել, միախառնվել և խաչով ջնջվել, որպեսզի ամեն ինչ անեն Հոգու շնորհիվ՝ Մարմնի գործնական կյանքի համար իրար մեջ Քրիստոս բաշխելու նպատակով՝ Հռմ 12:1-5, հմմտ Բ Մնց 1:10:

Ե. Գեդեոնն ու իր երեք հարյուր մարդիկ վարեցին մարտն ու տքնեցին, սակայն թշնամուն հետապնդեց ու հունձքը քաղեց ամբողջ ժողովքը, ինչը նշանակում է, որ երբ մենք հաղթում ենք, ամբողջ Մարմինը կենդանանում է, մինչև որ Եհովան՝ որպես խաղաղություն՝ Եհովա-Շալոմ (Դտվ 6:24), թագավորի երկրի վրա՝ 7:22-25, 8:1-4, Կղս 1:24, Սղմ 128:5, Եսյ 32:17, 66:12:

Զ. Երբ Գեդեոնն ու նրա մարդիկ հալածում էին Մադիանի թագավորներին, նրանք «նվաղած էին, բայց հալածում էին թշնամուն» (Դտվ 8:4բ). քանի որ մենք ստացել եք Աստծու ողորմությունը, որպեսզի սպասավորենք և ապրենք Աստծու հավիտենական տնտեսության իրականության մեջ, մենք չենք վհատվում (Բ Կրթ 4:1, 16-18). մենք, հնարավոր է, տքնում ենք ուժասպառության աստիճանի, բայց մեր տքնանքն իրագործվում է Աստծու գործողության համաձայն, որ զորությամբ գործում է մեր մեջ (Կղս 1:28-29, Ա Կրթ 15:58):

**III. Մենք պետք է տեսնենք Գեդեոնի ձախողման թաքնված պատճառի խորքային նշանակությունը.**

Ա. Նախ՝ Գեդեոնը բարություն չդրսևորեց. նա սպանեց այն համերկրացիներին, որոնք իրեն չսատարեցին (Դտվ 8:16-17)՝ խախտելով Աստծու վեցերորդ պատվիրանը (Ելց 20:13). Քրիստոսը՝ որպես Աստծու բարությունը, մեզ առաջնորդել է ապաշխարության (Հռմ 2:4, Տտս 3:4, Եփս 2:7):

Բ. Երկրորդ՝ նա հագուրդ էր տալիս մսեղիի տենչանքներին (հմմտ Գղտ 5:16, Հռմ 8:4)՝ իր մսեղավոր տենչանքները զսպել չփորձելով. սա մատնանշված է Դտվ 8:30-ում, որտեղ ասվում է, որ Գեդեոնը յոթանասուն որդի ուներ, որովհետև «նա շատ կանայք ուներ». բացի դրանից՝ նրա հարճը, ով Սյուքեմում էր, նույնպես նրա համար որդի ծնեց (խ. 31). դրանով Գեդեոնը խախտեց յոթերորդ պատվիրանը (Ելց 20:14):

Գ. Երրորդ, թեև Գեդեոնը ճիշտ վարվեց՝ հրաժարվելով ժողովրդի վրա իշխելուց (Դտվ 8:22-23), նա ցանկացավ իր ժողովրդի ավարը (նրանց ոսկե ականջօղերը)՝ դրանով իսկ խախտելով տասներորդ պատվիրանը, և նրանք զիջեցին նրան. Գեդեոնը եփուդ պատրաստեց այն ոսկուց, որը վերցրել էր ժողովրդից, և այդ եփուդը կուռք դարձավ Իսրայելի զավակների համար (խխ. 24-27, Ելց 32:1-4 և 2-րդ խոսքի ծթգ 1). արդյունքում Գեդեոնի ընտանիքն ու Իսրայելի ամբողջ հասարակությունը ապականվեցին:

Դ. Դատավորացը բարի երկիրը, որը Քրիստոսի նախատիպն է, վայելելու մասին գիրք է. Գեդեոնի հաջողությունը ցույց է տալիս Քրիստոսին վայելելու հրաշալի հնարավորություն ձեռք բերելը, իսկ նրա ձախողումը ցույց է տալիս Քրիստոսին վայելելու հնարավորությունը կորցնելը:

**IV. Տենչանքներին հագուրդ տալն ու ոսկու հանդեպ իր ընչաքաղցությունը Գեդեոնին կռապաշտության տարան. ընչաքաղցությունը կռապաշտություն է (Կող 3:5), և թե՛ պոռնկությունը, թե՛ ընչաքաղցությունը կապված են կռապաշտության հետ (Եփս 5:5). նրա ձախողումը ցույց է տալիս, որ մենք պետք է խիստ ժուժկալություն դրսևորենք սեռական հարաբերությունների և հարստության հարցերում.**

Ա. Նույնիսկ Սողոմոն թագավորը, որ փառավորվեց Իսրայելի թագավորությունում այդ թագավորության իր բարձրակետում ունեցած շքեղությամբ (Գ Թգ 4:34, 8:10-11) և սկսեց որպես Աստծուց երկյուղող և Աստծուն սիրող մարդ, ի վերջո դարձավ կռապաշտ իր բազմաթիվ օտարերկրյա կանանց պատճառով (11:1-13, տե՛ս 43-րդ խոսքի ծթգ 1):

Բ. Գեդեոնի մեռնելուց հետո Իսրայելի դեգրադացիան սկսվեց այն բանից, որ նրանք թողեցին Եհովային՝ իրենց Աստծուն, և սկսեցին երկրպագել քանանացիների կուռքերին, ինչը հանգեցրեց իրենց՝ մսեղավոր տենչանքներին հագուրդ տալուն. բացի դրանից՝ Գեդեոնի հարճի որդին՝ Աբիմելեքը, սպանեց Գեդեոնի մյուս յոթանասուն որդիներին, բայց Հովաթամը՝ ևս մեկ որդի, փրկվեց՝ Դտվ 8:33–9:57:

Գ. Հովաթամը համարձակորեն մի առակ հռչակեց Աբիմելեքի թագավորման՝ որպես մացառաթփի թագավորման մասին՝ ի հակադրություն նրանց, ովքեր նման են ձիթենիների, թզենիների և խաղողի որթերի և ովքեր մերժում են փառասիրությունն ու դառնում մատակարարման հոսքուղի Աստծու մարդկանց համար (խխ. 8-13). Աստված հատուցեց Աբիմելեքի չարիքի համար (խխ. 14-55), որ նա արեց իր հորը՝ սպանելով իր յոթանասուն եղբայրներին, և Աստված Սյուքեմի մարդկանց ողջ չարիքը վերադարձրեց նրանց գլխին, և Հովաթամի՝ Հերո-Բաաղի (Գեդեոնի՝ 6:32) որդու անեծքը եկավ նրանց վրա (9:56-57):

Դ. Իր հաջողության մեջ Գեդեոնը միացավ Աստծուն, իսկ իր ձախողման մեջ նա միացավ Սատանային. Աստծուն թողնել և Սատանային միանալ նշանակում է միանալ խորքային փառասիրական ձգտմանը, որը հատուկ է չարին՝ Եսյ 14:13-14:

Ե. Մենք Տիրոջից ամուսնալուծվելու իրավունք և Նրան թողնելու պատճառ չունենք. մենք պետք է ընդունենք Նրան, սիրենք Նրան, պատվենք Նրան, հարգենք Նրան, անսանք Նրան, մեծարենք Նրան և կառչենք Նրան՝ լիովին մերժելով Սատանային. այդժամ երանելի կլինենք. երանելի են բոլոր նրանք՝ ժողովուրդ, հասարակություն, խումբ և անհատ, որոնց Տերը, Գլուխը, Թագավորն ու Ամուսինը Եհովան է՝ Սղմ 33:12:

©2021 *LivingStreamMinistry*